ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐը

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐը

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1

Նշվածներից ո՞րն է <<Դեկորատիվ նկարչություն>> տեսակի պարապմունքի առաջադրանք:

1. նատյուրմորտը
2. էջանիշի ձևավորումը
3. բնապատկերը
4. երկրաչափական քանդակը

2

Ո՞րը դեկորատիվ, կիրառական արվեստի տեսակ *չէ:*

1. էստամպը
2. կարպետագործությունը
3. ապակենկարչությունը (վիտրաժ)
4. որմնագորգը (գոբելեն)

3

Ո՞րն է դեկորատիվ հորինվածքի կառուցման առաջնային պահանջը:

1. գունային համադրությունը /կոնտրաստ/
2. համաչափությունների պահպանումը
3. մասնիկների բազմազանությունը
4. կոմպոզիցիայի արտահայտչականությունը

4

Ո՞րը <<Բնօրինակից նկարչություն>> տեսակի պարապմունքի փուլ *չէ:*

1. տեղադրումը թղթի մեջ
2. ստվերագծման կուլտուրան
3. հեռանկարի, լույսի և ստվերի կիրառումը
4. զարդանախշի կազմումը

5

Նշվածներից ո՞րը կերպարվեստի տեսակ *չէ:*

1. թատրոնը
2. գրաֆիկան
3. քանդակագործությունը
4. գեղանկարչությունը

6

Կերպարվեստի ո՞ր ժանրին է պատկանում թռչունների և կենդանիների պատկերումը:

1. բնապատկերին
2. կենցաղային ժանրին
3. անիմալիստական ժանրին
4. նատյուրմորտին

7 **Ո՞ւմ կողմից է առաջին անգամ կիրառվել ակադեմիական նկարչության դասավանդման համակարգը:**

1. Միռոնի
2. Դյուրերի
3. Պոլիկլետի
4. Ալբերտիի

8 **Ի՞նչ է կոչվում հատուկ ապակու (սմալտա) գունավոր փոքր քառակուսիներից և այլն կազմված նկարը:**

1. խճանկար
2. ապլիկացիա
3. գրավյուրա
4. վերատպություն

9 **Տրվածներից ո՞րը չի ստեղծվում կիրառական և գեղագիտական միասնությամբ:**

1. գոբելենը
2. բարձրաքանդակը
3. կավե աղամանը
4. արծաթյա գոտին

10 **Ո՞վ է ուսուցման դիդակտիկայի սկզբունքների հեղինակը:**

1. Կոմենսկին
2. Բրյուլովը
3. Ժան Ժակ Ռուսսոն
4. Պեստալոցցին

11 **Նշվածներից ո՞րը գույնի հատկություն *չէ:***

1. լուսեղությունը
2. տոնը
3. հագեցվածությունը
4. բազմազանությունը

12 **Աշակերտի ընգրկվելը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ նրա ո՞ր ունակությունն է զարգացնում:**

1. սատարման և կարեկցանքի
2. գեղեցիկը զգալու և պատկերելու
3. առաջխաղացման ձգտումների
4. տարածական պատկերացումների

13 **Նշվածներից ո՞րն է կերպարվեստի դասավանդման առաջնային խնդիր:**

1. շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման զարգացումը
2. քննադատական մտածողության զարգացումը
3. ինքնահաստատման կարողության ձևավորումը
4. իրապաշտական վերարտադրության ձևավորումը

14 **Մատիտով, փայտածուխով, տուշով կամ նույն գույնի ներկով արված նկարը կոչվում է՝**

1. գեղանկարչություն
2. գրաֆիկա
3. զարդարվեստ
4. կոլլաժ

15 **Ի՞նչ է կոչվում այն սպիտակ թուղթը, կամ տախտակը, որը նախատեսված է ներկերը խառնելու և ցանկալի գույն ստանալու համար:**

1. մոլբերտ
2. պաստել
3. ներկապնակ
4. շրջանակ

16 **Որևէ բանի վրա տարբեր զարդապատկերներից (ֆիգուրներից), կտրտված որևէ նյութից և այլն ստեղծված գեղարվեստական պատկերը կոչվում է՝**

1. Օֆորտ
2. Փակցանկարչություն (ապլիկացիա)
3. Լիտոգրաֆիա
4. Մանրանկարչություն

17 **Արևմտյան լուսավորիչներից ո՞րը ներդրում ունի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայում:**

1. Ժան Ժակ Ռուսսոն
2. Թեոդը
3. Յոհանես Բեխեռը
4. Լիոն Ֆեյխտվանգերը

18 **Վերածննդի դարաշրջանում նկարչության դասավանդման մեջ ի՞նչն էր համարվում առաջնայինը:**

1. գունատեսությունը
2. ծեփակերտումը
3. արվեստի պատմությունը
4. գծանկարը

19 **Դեկորատիվ արվեստի ո՞ր տեսակի համար է հատկապես անհրաժեշտ ներկարարության արհեստը:**

1. գորգագործության
2. բրուտագործության
3. մետաղի մշակման
4. փայտի գեղարվեստական փորագրության

20 **Ո՞վ է ժամանակակից գոբելենի արվեստի հիմնադիրը Հայաստանում:**

1. Սարգիս Մուրադյանը
2. Արմինե Կալենցը
3. Կարապետ Եղիազարյանը
4. Հռիփսիմե Սիմոնյանը

21 **Նշվածներից ո՞րն է դեկորատիվ, կիրառական արվեստի սինթետիկ բնույթի արտահայտությունը:**

1. ձևի և դեկորի փոխներթափանցումը
2. ուղղությունների ազդեցությունը
3. կերպարվեստի տարբեր միջոցների համադրումը
4. պատկերագրությունը

22 **Ո՞րն է նկարչի ստեղծագործական երևակայության ամենահզոր սկզբնաղբյուրը:**

1. գույները
2. գրականությունը
3. թատրոնը
4. բնությունը

23 **Որո՞նք են հայկական քաղաքային տարազում կրառվող հիմնական գույները** :

1. կապույտը, 2. շագանակագույնը, 3. նարնջագույնը, 4. սպիտակը,
5. մանուշակագույնը, 6. դեղինը

1. 1,4,5
2. 1, 2,3,4
3. 3,5,6
4. 2,4,5,6

24 **Ո՞րն է հայկական տարազի հորինվածքի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. գույնը
2. զարդանախշը
3. կառուցվածքը (կոնստրուկցիան)
4. նյութը

25 **Աշխարհահռչակ թանգարաններից որո՞ւմ են առավելագույնս ներկայացվել ու լուսաբանվել տարազի և նորաձևության մեծաքանակ հավաքածուները:**

1. Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում
2. Կիոտոյի հագուստի թանգարան-ինստիտուտում
3. Ֆլորենցիայի Գուչիի թանգարանում
4. Լոնդոնի նորաձևության և տեքստիլի թանգարանում

26 **Ինչպիսի՞ն է ազգային տարազում կիրառվող հիմնական ուրվագիծը:**

1. ազատ
2. սեղանաձև
3. ուղիղ
4. լրիվ ընդգրկող

27 **Ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային նախադրյալներից է՝**

1. հանրահայտ նկարչի ստեղծագործությունը
2. հուզազգայական մթնոլորտը
3. ստեղծագործելու միջավայրը
4. հիշողությունը

28 **Կերպարվեստի ո՞ր տեսակին է պատկանում լինոփորագրությունը:**

1. գեղանկարին
2. դեկորատիվ արվեստին
3. քանդակագործությանը
4. գրաֆիկային

29 **Թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կոչվում է՝**

1. օֆորտ
2. մոնոտիպիա
3. էստամպ
4. կոլաժ

30 **Ո՞րն է հայկական արևմտյան տարազաձևի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. գլխի հարդարանքը
2. զարդանախշը
3. հարուստ ասեղնագործությունը
4. գոտին

31 **Նշվածներից հայկական ավանդական տարազի հորինվածքում ինչպիսի՞ հին զարդանախշից է առավել հաճախ գործածվել:**

1. ռոմբաձև
2. քառակուսի
3. Տ-աձև
4. շրջանաձև

32 **Աշխարհում ամենահին տիկնիկներից է համարվում մամոնտի ոսկրից պատրաստված մարիոնետ տիկնիկը. որտե՞ղ է այն հայտնաբերվել:**

1. Իսպանիայում
2. Գերմանիայում
3. Ֆրանսիայում
4. Չեխիայում

33 **Ստեղծագործության վերլուծության համար առաջնահերթ ո՞ր կարողությունն է հարկավոր զարգացնել առաջին հերթին:**

1. հաղորդակցական կարողությունը
2. համադրական դիտարկումը
3. տեսողական ընկալումը
4. վերլուծական մտածողությունը

34 **Հայ մեծանուն նկարիչներից ո՞վ է թատերական հագուստի էսքիզներ կատարել:**

1. Վարդգես Սուրենյանցը
2. Մարտիրոս Սարյանը
3. Արշիլ Գորկին
4. Մինաս Ավետիսյանը

35 **Հին հայկական ավանդական հարսանիքում, որպես ավանդույթ հարսնացուին զարդերի հետ մեկտեղ սկեսուը ուրիշ ի՞նչ էր նվիրում:**

1. սպասք
2. կարպետագործ անկողնապարկ
3. ոսկեթել ասեղնագործ կարմիր գոգնոց
4. գլխի հարդարանք

36 **Որտե՞ղ է սկզբնավորվել տարբեր իրերի պատրաստումը պապիե-մաշեի տեխնիկայով:**

1. Գերմանիայում
2. Ճապոնիայում
3. Ֆրանսիայում
4. Չինաստանում

37 **Հայաստանի ո՞ր թանգարանում են ներկայացվել և ֆոնդերում պահպանվել հայկական տարազի առավել շատ նմուշներ:**

1. Երևանի պատմության թանգարանում
2. Հայաստանի պատմության թանգարանում
3. Էրեբունի թանգարանում
4. Հովհաննես Շարամբերյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում

38 **Տրվածներից ո՞րն է թեմատիկ հորինվածքի տարր:**

1. ստեղծագործության սկզբնաղբյուրը
2. ստեղծագործության գուներանգը
3. ստեղծագործության չափը
4. ստեղծագործության նյութը

39 **Ուսուցման գործընթացում ո՞րն է դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը:**

1. ճանաչողական մտածողության զարգացումը
2. այլընտրանքային տեղեկատվության աղբյուր ստեղծելը
3. սովորողների պատրաստվածության ստուգումը
4. նպատակաուղղվածության ձևավորումը

40 **Հայաստանում ո՞ր դարաշրջանում է ձևավորվել որմնանկարչությունը:**

1. նախնադարյան
2. հելլենիստական
3. ուրարտական
4. միջնադարյան

41 **Ո՞ր տաճարի բաղնիքում է պատկերված հայկական խճանկարչության առաջին նմուշը:**

1. Արուճ
2. Լմբատավանք
3. Գառնի
4. Զվարթնոց

42 **Ու՞մ անվան հետ է կապված *հելլենիզմ* եզրույթը:**

1. Արիստոտելի
2. Անատոլի Գեկկերի
3. Ալեքսանդր Մակեդոնացու
4. Բորիս Պիոտրովսկու

43 **Ո՞ր թվականին և որտե՞ղ է ձևավորվել Գեղարվեստական շրջիկ ցուցահանդեսների ընկերությունը՝**

1. 1879 թ. Մոսկվայում
2. 1870 թ. Սանկտ Պետերբուրգում
3. 1868 թ. Կիևում
4. 1856 թ. Իրկուտսկում

44 **Նշված հայկական եկեղեցիներից ո՞րն է համարվում բազիլիկ տիպի կառույց:**

1. Հռիփսիմե
2. Գայանե
3. Շողակաթ
4. Երերույք

45 **Ո՞վ է հայ դասական բնանկարի հիմնադիրը:**

1. Եղիշե Թադևոսյանը
2. Մարտիրոս Սարյանը
3. Գևորգ Բաշինջաղյանը
4. Փանոս Թերլեմեզյանը

46 **Ո՞վ է ձևավորել Հայաստանի առաջին հանրապետության թղթադրամը:**

1. Հակոբ Հակոբյանը
2. Եղիշե Թադևոսյանը
3. Արշակ Ֆեթվաճյանը
4. Ստեփան Աղաջանյանը

47 **Ապարանի Վերածնունդ հուշահամալիրը քանի՞ հուշակոթողներից է բաղկացած:**

1. չորս
2. երեկու
3. մեկ
4. երեք

48 **Տրվածներից ո՞րը գեղանկարչության արտահայտչամիջոց *չէ:***

1. գիծը
2. գույնը
3. լուսաստվերը
4. հեռանկարը

49 **Գրիչ, մանրանկարիչ Թորոս Ռոսլինը ո՞ր մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ է:**

1. Կիլիկյան
2. Գլաձորի
3. Վասպուրականի
4. Տաթևի

50 **Հովնաթանյան նկարչների տոհմի ներկայացուցիչներից ո՞վ է Շուշանիկ Նաղիրյանի դիմանկարի հեղինակը:**

1. Նաղաշ Հովնաթանը
2. Հակոբ Հովնաթանյանը
3. Հովնաթան Հովնաթանյանը
4. Աղաթոն Հովնաթանյանը

51 **Աբովյանի ծննդավայր Քանաքեռ գյուղի վերաբերյալ առաջին հիշատակությունը ո՞ր եկեղեցու գավթի արձանագրության մեջ է հիշատակվում:**

1. Սանահին
2. Տաթև
3. Հաղարծին
4. Գոշավանք

52 **Ո՞վ է Խաչտուր Աբովյանի տուն-թանգարանի բակում տեղադրված հուշարձանի հեղինակը:**

1. Արա Սարգսյանը
2. Ղուկաս Չուբարյանը
3. Անդրեաս Տեր-Մարուքյանը
4. Արա Հարությունյանը

53 **Ո՞վ է Երևանի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը:**

1. Արա Սարգսյանը
2. Ղուկաս Չուբարյանը
3. Արա Հարությունյանը
4. Լևոն Թոքմաջյանը

54 **Ու՞մ վրձնին է պատկանում «Նաիրայի դստեր հարությունը» կտավը:**

1. Վասիլի Պոլենովի
2. Իսահակ Լեվիտանի
3. Վալենտին Սերովի
4. Իլյա Ռեպինի

55 **Ո՞վ է «Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի» հուշարձանի հեղինակը**

1. Սարգիս Բաղդասարյանը
2. Արտաշես Հովսեփյանը
3. Ղուկաս Չուբարյանը
4. Հակով Գյուրջյանը

56 **Ո՞րտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Իններորդ ալիք» կտավը:**

1. Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանում
2. Հայաստանի ազգային պակերասրահում
3. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահում
4. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահում

57 **Ո՞վ է «Մենք ենք մեր սարերը»(Պապիկ -տատիկ) հուշարձանի հեղինակը՝**

1. Սարգիս Բաղդասարյանը
2. Դավիթ Երևանցին
3. Երվանդ Ոսկանը
4. Այծեմնիկ Ուրարտուն

58 **Ո՞վ է «Խնջույք Քուռ գետի ափին» աշխատանքի հեղինակը:**

1. Ստեփան Աղաջանյան
2. Ստեփանոս Ներսիսյան
3. Հակոբ Հակոբյան
4. Հովհաննես Այվազովսկի

59 **Ո՞վ է հին հունական դիցաբանության պանթեոնի «Արևի Աստվածը»:**

1. Զևսը
2. Աֆրոդիտեն
3. Հելիոսը
4. Աթենաս-Պալլասը

60 **Ո՞վ է «Հանճարն ու ամբոխը» կտավի հեղինակը:**

1. Փանոս Թերլեմեզյանը
2. Գևորգ Բաշինջաղյանը
3. Մարտիրոս Սարյանը
4. Եղիշե Թադևոսյանը

61 **Ո՞ր Աստվածներն են կազմում ուրարատական դիցարանի գերագույն եռյակը:**

1. Խալդի, Թեյշեբա, Շիվինի
2. Վահագն, Անահիտ, Տիր
3. Արամազդ,Անահիտ, Վանատուր
4. Միհր,Նանե,Աստղիկ

62 **Ո՞ր կինոռեժիսորն է նկարահանել «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմը:**

1. Լևոն Աբրահամյանը
2. Սերգեյ Փարաջանովը
3. Երվանդ Ծատուրյանը
4. Վահան Գալստյանը

63 **Ո՞վ է հայկական դիցարանի «Ստորերկրյա աշխարհի Աստվածը»:**

1. Արամազդը
2. Սպանդարամետը
3. Տիրը
4. Միհրը

64 **Համապատասխանեցնել նշված հեղինակներին՝ ըստ մանրանկարչական դպրոցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Սարգիս Պիծակ, բ.Թորոս Տարոնացի, գ. Մարգարե, դ.Գրիգոր Տաթևացի

ա	բ	գ	դ

1. Անիի մանրանկարչության դպրոց
2. Գլաձորի մանրանկարչության դպրոց
3. Կիլիկյան մանրանկարչության դպրոց
4. Տաթևի մանրանկարչության դպրոց

65 **Համապատախանեցնել հետևյալ մայրաքաղաքը ըստ դարաշրջանների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Դվինը , բ. Տուշպան, գ. Երվանդաշատը, դ.Անին:

ա	բ	գ	դ

1. Զարգացած միջնադարյան
2. Ուրարատական
3. Վաղ միջնադարյան
4. Հելլենիստական

66 **Համատասխանեցնել քանդակագործների աշխատանքները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

Ա. Կոմիտասի հուշարձան, 2003, Դավիթ Երևանցի

Բ. Բուլատ Ակուջավա, 2002 թ. Գեորգի Ֆրանգուլյան



Գ. Սասունցի Դավիթ, 1971 թ. Վարազ Սամուելյան

Դ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 2005 թ. Խաչիկ Ղազանչյան

1. Մոսկվա
2. Փարիզ
3. Վատիկան
4. Ֆրեզնո

ա	բ	գ	դ

67 **Համապատասխանեցնել նշված վարպետներին ըստ ճարտարապետական կառույցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա. Անիի Մայր տաճար, բ. Նորավանքի Սբ. Աստվածածին եկեղեցի,
գ. Ախթամարի Սբ. Խաչ եկեղեցի, դ.Արատեսի վանքի գավիթը:

1. Մոմիկ
2. Սիրանես
3. Տրդատ
4. Մանուել

ա	բ	գ	դ

68 **Համապատասխանեցնել նշված արվեստագետներին իրենց աշխատանքներին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**



ա.Խորհրդավոր ընթրիք, (1495-1498)

բ. Վեներայի ծնունդը, (1486)

գ.Սիքստինյան Տիրամայրը(1512-1513)

դ. Աղոթող ձեռքեր (մոտ. 1508)

.

1. Ռաֆայել Սանտի
2. Ալբրեխտ Դյուրեր
3. Լեոնարդո դա Վինչի
4. Սանդրո Բոտիչելլի

ա	բ	գ	դ

69 **Համապատասխանեցնել հետևյալ պաշտամունքային կառույցները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**



ա. Զվարթնոց

բ. Կարմրավոր



Գ. Հռիփսիմե

դ. Օձուն

1. Լոռի
2. Վաղարշապատ
3. Վաղարշապատից 3 կմ հարավ-արևելք
4. Աշտարակ

ա	բ	գ	դ

70

Համապատասխանեցնել դեկորատիվ ստեղծագործությունների անունները իրենց բնութագրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:

ա. ասեղով և թելով գործված ստեղծագործություն

բ. գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն

գ. գործվածքի վրա կաղապարի միջոցով և հատուկ նյութերով պատկերված նկարազարդ ստեղծագործություն

դ. գնդասեղներով և թելերի հանգույցներով նախշազարդ ձեռագործ ստեղծագործություն

1. ժանյակ
2. մաքրամե
3. դաջազարդում
4. բատիկ

ա	բ	գ	դ